

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ «ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ» 1945 Թ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ս. Ա. ՇՏԻԿՅԱՆ

Միքայել Նալբանդյանի «Հիշատակարան (Կոմս էմմանուելի օրագրական թերթերից)» հանրահայտ հրապարակախոսական հուշադրությունը, որը 1858—1860 թթ. հրապարակվել է «Հյուսիսափայլ» ամսագրի էջերում, հայ պատմաբանների ու բանասերների քննության և ուշադրության առարկան է հանդիսացել։ Աշխատությունն իր ամբողջական և ճշգրտված ձևով, համալրված մասնագիտական ծանոթագրություններով, ինչպես հայտնի է, ներկայացվել է նրա «Երկերի լիակատար ժողովածուի» առաջին հատորում (Երևան, 1945, էջ 305—488)։ Սակայն «Հիշատակարանում» առկա են մի շարք ուշադրավ փաստեր, որոնք կամ պարզապես չեն ծանոթագրվել, կամ ծանոթագրվել են անբավարար և հետևաբար անհասկանալի են մնում ընթերցողի համար։ Դրանց պարզաբանումն օգնում է հասկանալու Մ. Նալբանդյանի կյանքի ու գործի հետ առնչվող ոչ քիչ մանրամասներ։ Դրանք ավելի լրիվ ծանոթագրելն ու ճշգրտելը անհրաժեշտ է այժմ, երբ ՀՍՍՀ ԳԱ գրականության ինստիտուտը ձեռնամուխ է եղել Մ. Նալբանդյանի «Երկերի լիակատար ժողովածուի» ակադեմիական նոր հրատարակության աշխատանքներին։ Կարծում ենք, որ մեր առաջարկած մի քանի պարզաբանումներն ու ճշգրտումները կարող են օգտակար լինել։

Խոսելով Մոսկվայում հայ ուսանողների ուժերով ներկայացված «եղերերգական խաղարկության մեջ» երգված «Խնդա այսօր Հայաստան» երգի մասին, Նալբանդյանը հավելում է, որ այն «չերգվեցավ այնպես, ինչպես նորա եղանակն էր, այլ պ[արոն] Վերտովսկու «Ах, подруженьки, как грустно» երգի եղանակով» (էջ 392)։ Ամբողջ այս տողը չի ծանոթագրված։

Նախ նշենք, որ վերոհիշյալ աղգանվան ճիշտ ձևն է Վերստովսկի, այդպես էլ տպագրվել է «Հյուսիսափայլում»։ Խոսքը վերաբերում է ռուսական օպերային երաժշտության ներկայացուցիչ, Ռուսաստանում երաժշտական գործի կազմակերպիչներից՝ Ալեքսեյ Նիկոլաևիչ Վերստովսկուն (1799—1862 թթ.)։ Տասնյոթ տարեկանից նա սկսում է հանդես գալ փոքրածավալ երաժշտական ստեղծագործություններով և արժանանում է մասնագետների (որոնց թվում՝ Ա. Ա. Ալյաբևի) դրվատական գնահատականներին։ Ոգևորված դրանից, Վերստովսկին շուտով ստեղծում է «Պան Տվարդովսկի», «Վադիմ կամ առաներկու քնած աղջիկներ» օպերաները։ Նրա գլուխգործոցը հանդիսացավ «Ասկոլդի գերեզմանը» (1835 թ.) օպերան, որի թեման վերցված է ուկրաինական ժողովրդի անցյալից։ Այն վերջնականապես հռչակեց Վերստովսկուն որպես տաղանդավոր երաժիշտ-կոմպոզիտորի։

1 Այստեղ և հետագայում էջերը նշված են ըստ Մ. Նալբանդյանի «Երկերի լիակատար ժողովածուի», Երևան, 1945, հատ. 1.

Նալբանդյանի ակնարկած երգը աղջիկների խմբերգն է Վերստովսկու վերոհիշյալ օպերայից: Ժամանակին այն երգվել է նաև առանձին և լայնորեն տարածված է եղել²: Ավելացնենք նաև, որ «Ասկոլդի գերեզմանը» օպերան մինչև Վերստովսկու մահը, աննշան ընդմիջումներով, բեմադրվել է Մոսկվայում, և 1853--1860 թթ. (ընդհատումներով) այստեղ գտնվող Նալբանդյանն անշուշտ լսել է այն:

Խոսելով վերոհիշյալ ներկայացման մասին, Նալբանդյանը այնուհետև գրում է. «Մի բան ևս չէ պիտոթ թողուլ առանց ուշադրության. պարոն Չիքվալիժե վրացի ուսանողը, մասնակից լինելով թեստրոնական գործողությանը... լուր վերադարձուց մեր մասնավոր ուշադրությունը» (էջ 392): Չիկվաիժեի (սկզբում՝ Չիկոիժե) վերաբերյալ տրված ծանոթագրության մեջ (էջ 534, ծան. № 52) կարդում ենք. «Այս երիտասարդ վրացու ով լինելը անհայտ մրնաց մեզ»: Բնականաբար, հատուրի վերջում զետեղված «Անվանական բառարանում» էլ «Չիկվաիժե» անուն-բացատրական չկա:

Նալբանդյանը նկատի ունի վրացական կրթական-մշակութային գործիչ, թարգմանիչ, հրապարակախոս Միխայիլ Ֆիլիպի Չիկվաիժեին: Ծնվել է Թբիլիսիում, 1837 թ.: Տարրական կրթություն ստանալուց հետո 1849 թ. ընդունվում է Թբիլիսիի վրացական կլասիկական գիմնազիան, որը ավարտում է 1856 թ.: 1857 թ. ընդունվում է Մոսկվայի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը, որտեղ ուսանում է շուրջ երեք տարի և որը ինչ-ինչ պատճառներով չի ավարտում: 1860 թ. Չիկվաիժեն վերադառնում է Թբիլիսի և նշվիրվում կրթական-հասարակական գործունեության: Շուտով նա դառնում է վրաց գրականության դասական Իլյա Շավճավաձեի գաղափարակից ընկերն ու հասարակական հայացքների պաշտպանը, իսկ 1863 թ. սկսում է թղթակցել վրացական վաթսուականների օրգան «Մաքարթվելոս մոամբե» («Վրացական լրաբեր») ամսագրին: Այստեղ և վրացական առաջադիմական մյուս պարբերականներում հրատարակած ղանադան բնույթի հոդվածների ու թարգմանությունների շնորհիվ նա վերջնականապես դասվում է վրացական առաջավոր մտավորականության՝ «վաթսուականների» («Թերեք-դալեուլնի») շարքը: Միխայիլ Չիկվաիժեն վախճանվել է Թբիլիսիում, 1911 թ.:

Մեղ հետաքրքրողը Չիկվաիժեի կենսագրության՝ 1857—1860 թթ. ժամանակահատվածն է, եբբ նա սովորում էր Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետում: Գրեթե նույն տարիներին (1854—1858 թթ.) այստեղ ազատ ունկնդիր էր գրանցված նաև Նալբանդյանը: Ելնելով այն բանից, որ հետագայում Նալբանդյանը բաղում առիթներով հիշում է իր ուսանողական տարիները, տալիս իր շատ ընկերների ու ծանոթ-բարեկամների անունները, վերաբրտագրում այլևայլ մանրամասներ, սակայն ոչ մի անգամ չի հիշատակում Միխայիլ Չիկվաիժեի անունը, պետք է ենթադրել, որ ուսանողական ներկայացման ժամանակ նրանց հանդիպումը եղել է միակը և չի վերածվել մտերմության:

«Հիշատակարանի» ուշագրավ հատվածներից է այն նամակը, որը Կոմս էմմանուելին է ուղարկվել Օշականից, «Սուրբ Մեսրոպի գերեզմանին այցելու» ստորագրությամբ (էջ 393—394): Նամակագիրը նշում է, որ հայ հոգեվորականների ղգալի մասը գերադասում է ապրել ու պատսպարվել ևկեղեցի-

² См. Б. В. Доброхотов, Верстовский и его опера «Аскольдова могила», 1962, էջ 87 (այստեղ էլ, էջ 66-ում, բերված են հիշատակված խոսքերը):

ներում, որի հետևանքով էլ, ազգի համար օգտավետ ու կրթական գործ կատարում են միայն «վիճակները եղած հոգևորականք»։ Մանոթագրելով այս տողերը, ինքը՝ Կոմս էմմանուելը, տողատակում (էջ 393) նշում է. «Շատ տխուր դիմագրությունք, այդ խոսքին, վաղուց արդեն շտեմարանված կան հին տարիների «Հիշատակարաններիս» մեջ»։

Այս հատվածը գրվել է 1858 թ. դեկտեմբերի 27-ին և հրատարակվել «Հյուսիսափայլի» 1859 թ. հունվարի ամսատետրակում։ Նշանակում է «Հիշատակարանի»՝ մինչև այս ժամանակաշրջանը եղած մի որևէ մասում Կոմս էմմանուելը խոսել է հայ հոգևորականության պարսավելի վարքագծի, նրանց՝ ազգային կրթության ու լուսավորության գործում մասնակցություն չբերելու և նման բնույթի այլ հարցերի մասին։ Ամենայն հավանականությամբ «Հիշատակարանում» եղել է նման մի հատված (կամ հատվածներ), որը նրա խիստ «հորեղբայրը» (ինչպես հայտնի է, Նալբանդյանն այսպես էր որակում Ստ. Նազարյանցին և միշտ տրտնջում էր, թե «նա իմ գլխին ցենզորի նման բան է», որ «ամենայն օր նայում է իմ «Հիշատակարանը» և այլն) կամ գուցե «հորեղբոր» ստիպմամբ ինքը դուրս է թողել «օրագրության թերթերից»։

Պակաս ուշագրավ չէ Մ. Նալբանդյանի հետևյալ գրառումը. «Դարձյալ մի նամակ ստացա պլարոնի Գամառ Քաթիպայից (Ս. Պետերբուրգից), որ մեղադրում է ինձ, թե ինչու համար նրա ուղարկած մի ոտանավորը չէ ընկել «Հյուսիսափայլի» մեջ, և թե ինչու մի գրավոր տեղեկություն չեմ տվել նորան շտպվելու պատճառի մասին» (էջ 394—395)։ Նշելով, որ ամսագրում որևէ գործ տպագրելու հարցում ինքն ամենևին էլ վճռական ձայն չունի, Նալբանդյանը հավելում է. «Իմ անունով ուղարկված, բայց անմիջապես «Հյուսիսափայլի» մեջ տպվելու գրվածքները ես ուղարկում եմ պարոն հրատարակողին, ինչպես պարոն Գամառ Քաթիպայի և մի քանի նոր ոտանավորքը, որ վերոհիշյալ նամակով ուղարկել էր ինձ. ավելին ոչինչ չեմ կարող անել, իմ ձեռքում ոչինչ չկա»։

Նալբանդյանի խոսքի՝ «Դարձյալ մի այլ նամակ ստացա...» ձևից դժվար չէ կռահել, որ նա մի նամակ, «Հյուսիսափայլում» հրատարակելու նպատակով ուղարկված բանաստեղծության հետ, մի անգամ արդեն ստացել էր Գամառ Քաթիպայից։ Ո՞րն էր այդ «մերժված» բանաստեղծությունը, ինչո՞ւ «Հյուսիսափայլն» այն չէր հրատարակել և այլ՝ այս բնույթի հարցերին պատասխան է տալիս Գամառ Քաթիպայի նախորդ նամակը՝ ուղղված «Մեծարգո պարոն Կոմս էմմանուելին»։ «Եթե չեմ սխալվում,—գրում էր նամակագիրը,—յոթը ամիս կլինի, որ ես ուղղել էի պայծառափայլությանդ անվամբ մի ոտանավոր, որո վերնագիրը «Դև Մուս» էր, և խնդրել էի, որ դուք հոգս տանեք մուծանել այն պատվական «Հյուսիսափայլ» օրագրի մեջ, որո խմբագրչին դուք աշխատակից եք։ Իմ խնդիրքը անկատար մնաց և այդ երկարատև միջոցումն ո՛չ տպվեցավ վերոհիշյալ ոտանավորն և ո՛չ պայծառափայլությունդ պետք համարեց պատասխան տալ և մեկնել չընդունվելու շարժառիթն։ Անհայտ չէ պարոնիդ, որ եվրոպական օրագիրների խմբագիրքը սովորություն ունին այդպիսի դեպքերի ժամանակ նույնիսկ օրագրի միջոցով պատասխանել ում հարկն է»։

Բացատրելով, որ իր ուղարկած «Դև Մուս» բանաստեղծությունը հասարակական-քաղաքական ոչ մի սուր ենթատեքստ չունի, և հետևաբար նրա հրատարակելը որևէ վնաս չէր պատճառելու ո՛չ ամսագրին և ո՛չ էլ նրա աշ-

խատակիցներին, Գամառ Քաթիպան «Հյուսիսափայլի» խմբագրությանն է ուղարկում իր երկրորդ բանաստեղծությունը՝ «Բռնի պսակ» խորագրով:

Այս երկրորդ նամակին է ահա, որ «Հիշատակարանի» վերը բերված հատվածով պատասխանել է Նալբանդյանը: Ելնելով այն բանից, որ Պատկանյանի երկրորդ նամակն ունի 1858 թ. նոյեմբեր-դեկտեմբեր թվագրությունը, ուրեմն նախորդը («Եթե չեմ սխալվում յոթը ամիս կլինի») պետք է գրված լիներ նույն տարվա սկզբներին:

Ամփոփելով վերևում ասվածը, «Հիշատակարանի» քննության առկա հատվածը, ըստ իս, պետք էր ծանոթագրել հետևյալ ձևով:

1858 թ. սկզբներին, արդեն նշանակալից բանաստեղծական անուն ու համբավ ունեցող Ռաֆայել Պատկանյանը³, Պետերբուրգից, որտեղ ուսումնառության նպատակով գտնվում էր դեռ 1855 թ., Նալբանդյանին է ուղարկում իր «Դե Մրուս» բանաստեղծությունը՝ համապատասխան նամակով, «Հյուսիսափայլում» հրատարակելու համար: Ըստ որում, նա պատրաստվում էր լայնորեն թղթակցել այդ ամսագրին ինչպես արձակ ու չափածո ստեղծագործություններով, այնպես էլ թարգմանական գործերով: Սակայն «Դե Մրուս» բանաստեղծությունը չի հրատարակվում: Նույն թվականի վերջերին Պատկանյանը ուղարկում է իր երկրորդ «Բռնի պսակ» բանաստեղծությունը (հետագայում՝ «Ծեր այր») և կից նամակում անում է մի քանի դիտողություններ: Նալբանդյանն այս անգամ նպատակահարմար է համարում Պատկանյանին պատասխանել իր «Հիշատակարանի» մի հատվածում, որտեղ նշում է, թե նրա այս երկրորդ բանաստեղծությունը դարձյալ չի տպագրվելու: Սրանից հետո Պատկանյանը խզում է կապերը «Հյուսիսափայլի» հետ:

Անշուշտ այս ծանոթագրությունը կբացահայտեր բավական ուշագրավ մի մանրամասնություն, կապված Նալբանդյան—Պատկանյան—«Հյուսիսափայլ» առնչությունների հետ և, ուրեմն, այն աչքաթող անել չէր կարելի:

Ս. Շահբեգի՝ 14 փետրվարի 1859 թվակիր հերթական նամակում, ուղղված Կոմս էմմանուելին, կարդում ենք. «Ես այս րոպեիս, երեք ամսական լռութենից հետո, հարկադրված եմ, փոխանակ զվարճալի բաների...» (էջ 397): Շահբեգի՝ Կոմսին առաքված և նրա «Հիշատակարանում» տպագրված վերջին նամակը գրվել է 1858 թ. սեպտեմբերի 18-ին, այսինքն՝ հինգ ամիս առաջ: Սա նշանակում է, որ վերոհիշյալ նամակից երեք ամիս առաջ, այսինքն 1858 թ. դեկտեմբերին, «Հիշատակարանում» պետք է որ զետեղված լիներ Ս. Շահբեգի մի այլ նամակը, ուղղված Կոմս էմմանուելին, որը, սակայն, ինչ-ինչ պատճառներով, «Հիշատակարանից» հանվել է:

Ս. Շահբեգի նամակում խոսվում է լեզգիների առաջնորդ Շամիլի ու նրա կամակատար խալիլ Նալիբի մասին (էջ 398): Համապատասխան ծանոթագրության մեջ (էջ 536, ծան. № 56) կարդում ենք. «Այս անվան տակ Նալբանդյանը Բավանդուքեն նկատի ունի Այվազովսկուն: Այդ դեպքում խալիլ Նալիբն էլ Հարություն խալիբյանն է» (ընդգծումը մերն է—Ս. Շ.): Մի տարի անց, Վարշավայից, Գրիգոր Սալթիկյանին դրած նամակում, Նալբանդյանը պարզ և որո-

3 Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հատ. 6, Երևան, 1970, էջ 209—210:

4 Հիշենք, որ 1855—1857 թթ. Պատկանյանն արդեն հրատարակել էր իր «Գամառ Քաթիպայի արձակ և չափաբերական աշխատությունների» բոլոր չորս տետրերը, նվաճելով հայ ընթերցողների համակրանքը, իսկ երկրորդ տետրակում եղած «Արաքսի արտասուքը» բանաստեղծությունը լայնորեն տարածվել էր ամենուրեք:

շակի հայտնում է, որ հենց այդպես էլ կա, որ իր ստեղծած գրական կերպարների նախօրինակները իսկապես Գաբրիել Այվազովսկին ու Հարություն Խալիբյանն են⁵:

Շամիրն ասում է. «Ես ծնած էի Սուննաթ, բայց երեխայությունից դաստիարակվելով Շիաթների մոտ, սրտի վկայությամբ ընդունել էի այդ վարդապետությունը... Բայց երբ վեստին ընդունեցի Սուննաթի դավանությունը... հասկացա, որ սխալած էի Շիաթների կրոնը պաշտպանելով» (էջ 401):

Շամիրի այս «եռաստիճան» կրոնափոխությունը նկարագրելով, Նալբանդյանը նկատի ունի Այվազովսկու «վարքը»: Ինչպես հայտնի է, վերջինս մկրտվել էր հայ լուսավորչական եկեղեցու կարգով: Գալով Վենետիկ, Մխիթարյանների մոտ ուսումնառության, նա 1834 թ. կաթոլիկություն է ընդունում և սկսում է հանդես գալ այդ կրոնը փառաբանող մեկից ավելի գործերով: Քաղաքական-հասարակական, իսկ ավելի շուտ՝ անձնական-եսասիրական մի շարք պատճառների հետևանքով, որոնք արդեն հանգամանորեն քննված են և պարզաբանված⁶, 1855 թ. Այվազովսկին, հրաժարվելով կաթոլիկությունից, նորից է վերադառնում հայ լուսավորչական եկեղեցու գիրկը և այս անգամ էլ սկսում է գրով ու բանիվ հանդես գալ կաթոլիկության ու նրա հիմնական սկզբունքների դեմ: Շամիրի՝ վերևում բերված խոսքերը գեթ այսքան ծանոթագրության կարիք չգում են:

Ս. Շահբեդի նամակին արված փոքրիկ հավելվածի մեջ նամակագիրը, տեղեկացնելով Փարիզում նոր հրատարակվել սկսող «Արևմուտք» պարբերականի մասին, նշում է. «Հրատարակողներից մինը, պ[արոն] Յ. Ոսկան⁷, ունի բանաստեղծական ճոխ քանքար» (էջ 410): Ո՛չ ծանոթագրություններում և ո՛չ էլ «Անվանական բառարանում» ոչ մի խոսք չկա այս անձնավորության մասին:

Արևմտահայ կրթական-մշակութային գործիչ, թարգմանիչ (Ֆրանսերենից հայերեն), բանաստեղծ Հակոբ Ոսկանը (1824—1907 թթ.) հրասլարակախոս և հասարակական գործիչ, «Արևմուտքի» խմբագիր Ստեփան Ոսկանյանի ավագ եղբայրն է:

Շահբեդ-Նալբանդյանը շփոթել է նրանց, դրանով իսկ շարժելով Ստ. Ոսկանյանի զայրույթը, որն արտահայտվեց «Արևմուտք» պարբերականում տպագրած նրա «Ծանուցումն»-ով: Բանն այն է, որ եղբայրները գաղափարական հակառակորդներ էին, մի հակառակություն, որը 60-ական թթ. վերածեց կատարյալ թշնամության: Նշան Մուրադյանը բերել է վերոհիշյալ «Ծանուցումն»-ը, սակայն, քանի որ չեն բացահայտված Հակոբ Ոսկանի և եղբոր փոխհարաբերությունները, ընթերցողի համար այն մնում է անհասկանալի:

Ինչո՞ւ է Նալբանդյանը թույլ տվել այդ վրիպումը՝ Հակոբ Ոսկանին համարելով «Արևմուտքի» խմբագիր, դժվար է ասել: Դատելով «Հիշատակարանի» այդ հատվածի որոշ անհաստատ տոնից, և մանավանդ՝ չլսում եմ, որ Փարիզում

5 Մ. Նալբանդյան, ԵՊՀ, հատ. 4, Երևան, 1949, էջ 61: Ի դեպ, այստեղ բերված օպիթիկյանի նամակն ունի «1859 թ. 31 մարտի» նշումը, իսկ առաջին հատորում բերված վերոհիշյալ ծանոթագրության մեջ՝ 1859 թ. 13 մարտի» թվագրությունը, որը վրիպակի արդյունք է:

6 Ա. Հ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, Երևան, 1955, էջ 252—283:

7 Ի դեպ, այն դեպքում, երբ կաղմողը ամբողջ «Հիշատակարանի» ուղղագրությունը փոխել է արևելահայերենի, չդիտես ինչու արևմտահայերեն ուղղագրությամբ է պահպանվել այս գործիչի անունը: Ըստ այդմ՝ պետք է գրվեր ոչ թե Յ(ակոբ) Ոսկան, այլ արևելահայերեն ուղղագրությամբ Հ(ակոբ) Ոսկան:

հրատարակվում է մի նոր ազգային օրագիր թե լրագիր...» թեական գրեկաձևից, ահտք է ենթադրել, որ Նալբանդյանը ձեռքի տակ չի ունեցել «Արևմուտքի» այդ այսինքն առաջին համարը, թեև նրա աշխարհ գալուց արգեն անցել էր շուրջ ամիսուկես: Սակայն այս ոչ մեծ վրիպումը հաստատուն հիմքեր չի տալիս հետևանքնու, թե «մինչև 1859 թ. իր արտասահմանյան ուղևորությունը Նալբանդյանը անձնական ծանոթություն չուներ Ստ. Ոսկանյանի հետ... և ուղինիս շփոթում էր նրա խմբագրին գրականագետ (°) Հակոբ Ոսկանի հետ»⁸:

Ս. Շահբեգի այս նամակով էլ Նալբանդյանն ավարտում է իր «Հիշատակարանի», սլաշմանականորեն ասած, առաջին շրջանը:

О НЕКОТОРЫХ КОММЕНТАРИЯХ К «ДНЕВНИКУ» М. НАЛБАНДЯНА

В ИЗДАНИИ 1945 г.

С. А. ШПИКЯН

(Резюме)

В числе других произведений М. Налбандяна особое место занимает его «Дневник» («Ишатакаран»), который в последний раз был издан в 1945 г. с комментариями Н. Мурадяна. Несмотря на старательную работу ученого, в «Дневнике» имеются события, факты, имена разных общественных деятелей и т. д., которые либо остались без комментария, либо освещены недостаточно. В статье предлагается несколько соответствующих разъяснений, которые помогают более глубоко и всесторонне понять «Дневник» Налбандяна. Приносим глубокую благодарность Институту истории грузинской литературы им. Ш. Руставели АН ГрузССР и лично Г. Е. Гвардцители за оказание нам посильной помощи.

⁸ Ա. շ. Հ ու զ ա ն ն ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 318: